

ԳՈՀԱՐ ԿՈՒՐԴԻՆՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ

ՀՀ ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՄՓՈՓ ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐԸ

Հիմնավորելով ՀՀ ներդրումային միջավայրի և ինստիտուցիոնալ համակարգի փոխկապակցվածությունը՝ հողվածում ներկայացվել են միջազգային հեղինակավոր կազմակերպությունների՝ երկրում ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումների ընթացքի վերաբերյալ գնահատականները, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության ու «Հերիթեջ» հիմնադրամի հետազոտությունների հիմնական արդյունքները: Կատարած վերլուծությունների հիման վրա հեղինակը մշակել է ՀՀ ներդրումային միջավայրի գնահատման միջազգային վարկանիշների ամփոփ աղյուսակ, որում ներկայացվել են բարեփոխումների մասով ՀՀ արժանազրած հաջողությունները և համեմատաբար թույլ ոլորտները:

Հիմնաբառեր. ներդրումային միջավայր, միջազգային վարկանիշ, ներդրումային միջավայրի գնահատում, ինստիտուցիոնալ խոչընդոտ, ինստիտուցիոնալ բարեփոխում, տնտեսական ազատություն

JEL: E22, F53, O38, O49

Յուրաքանչյուր երկրի տնտեսական, սոցիալական և գիտատեխնիկական զարգացումը կապված է ներդրումային գործունեության հետ, իսկ վերջինս պայմանավորվում է տնտեսության զարգացման երկարաժամկետ նպատակներով, որոնք իրականացվում են նախապես մշակված ներդրումային քաղաքականությանը համապատասխան: Փաստ է, որ տնտեսության զարգացման որակական դրական հատկանիշների առկայությունը և նորամուծական ոլորտի գերակայությունը զարգացած և արագ զարգացող երկրների համար լուրջ հիմք են արդյունահանող և ներմուծմանը փոխարինող տնտեսական ռեժիմից արտահանման «նորամուծական ռեժիմին» անցում կատարելիս, որտեղ տնտեսության զարգացման շարժիչ ուժ է նորամուծության ոլորտը¹: Հետևապես՝ տնտեսության նշված և առհասարակ բոլոր ոլորտ-

¹ Տե՛ս Ծ.Կարապետյան, Նորամուծական գործունեություն, Եր., «Ստամպ», 2008, էջ 150:


ներում տնտեսական գործունեությունն ակտիվացնելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել ներդրումային գործունեության համար նպաստավոր պայմաններ: Ներդրումային միջավայրը պայմանավորված է քաղաքական, ինստիտուցիոնալ և հոգեբանական առկա ու ապագա գործոններով, որոնք իրենց ազդեցությունն են թողնում ներդրումներին առնչվող ռիսկերի և ներդրումներից ստացվող շահույթի վրա: Այլ խոսքով՝ բարենպաստ ներդրումային միջավայրը խթանում է մասնավոր ներդրումները և տնտեսական աճը՝ ներդրումներ կատարելու, աշխատատեղեր ստեղծելու և երկարատև գործարար հաջողությունների հնարավորություններ ստեղծելով:

Ներդրումային միջավայրը բնութագրող ցուցանիշներն արտահայտում են տվյալ երկրի գործարար շրջանակների ընդհանրացված տեսակետները գործարարության և ներդրումների հիմնական արգելքների, տնտեսության մի շարք ոլորտներում գործարար պայմանների վերաբերյալ: Ներդրումային միջավայրի որակը բնութագրող ցուցանիշները կարող են օգտակար տեղեկություններ պարունակել ինչպես օրենսդրական կարգավորումների՝ իրական կյանքում կիրարկման վերաբերյալ, այնպես էլ երկրում գործարար ու ներդրումային ակտիվության տարբեր խոչընդոտների մասին:

Այս համատեքստում ներկայացվում են ՀՀ ներդրումային միջավայրի գնահատման միջազգային վարկանիշներն՝ ըստ տարբեր կազմակերպությունների, որոնց նպատակն է ուսումնասիրել երկրում իրականացվող ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումները:

Վերականգնման և զարգացման եվրոպական բանկը (ՎՋԵԲ) Համաշխարհային բանկի խմբի հետ իրականացնում է գործարար միջավայրի ու ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ լայնածավալ հարցում-հետազոտություն, որի նպատակն է ուսումնասիրել երկրների գործարար միջավայրերի զրավչությունը պետության և ձեռնարկությունների փոխգործակցության տեսանկյունից: Հայաստանում վերջին հետազոտությունն անցկացվել է 2012–2013 թթ., որի շրջանակում ուսումնասիրվել է 360 ձեռնարկություն: Չափորոշիչները ներառել են Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի մի խումբ երկրների միջին ցուցանիշները, ինչպես նաև Հայաստանի եկամուտների համանման մակարդակ ունեցող երկրների միջին ցուցանիշները: Հետազոտության արդյունքներով կազմվել է գծապատկեր, որը ներկայացնում է ՀՀ գործարար միջավայրի՝ հարցման ենթարկված ձեռնարկությունների կողմից նշված էական խոչընդոտները:

Ինչպես պարզ է դառնում գծապատկերից, որպես ամենամեծ խոչընդոտ նշվել են հարկային բարձր դրույքաչափերը, անարդյունավետ հարկային վարչարարությունը, քաղաքականապես անկայուն միջավայրը, մաքսային և առևտրային կարգավորումների անարդյունավետությունը և այլն: Դրանցից զատ, խոչընդոտ են համարվել նաև կոռուպցիան, ֆինանսների և հողի անհասանելիությունը, աշխատուժի ոչ բավարար կրթվածությունն ու աշխատանքային կարգավորումները:



Գծապատկեր 1. Հայաստանում գործարար միջավայրի խոչընդոտները ըստ 2013 թվականի հարցումների²

2011–2014 թթ. ընթացքում ՎՋԵԲ-ը հրապարակել է մի շարք զեկույցներ, որոնցում ներկայացվել են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Ասիայի, Հյուսիսային Աֆրիկայի և նախկին ԽՍՀՄ երկրների անցումային տնտեսություններում իրականացված կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումները³: 2015 թ. նոյեմբերին հրապարակվեց ուշագրավ նոր փաստաթուղթ՝ «Անցումային զեկույց 2015–2016. ֆինանսավորման հավասարակշռության վերականգնում»⁴: Նշված զեկույցներում ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումների ընթացքը գնահատելու նպատակով ՎՋԵԲ-ը դիտարկել է շուկայական տնտեսության 6 հիմնական ոլորտները՝ ձեռնարկություններ, շուկաներ և առևտուր, կորպորատիվ հատված, էներգետիկ հատված, ենթակառուցվածքներ և ֆինանսական հաստատություններ: Ամփոփ ձևով ներկայացվել է 22 առանձին ցուցանիշ, որոնց չափման սանդղակն է 1 – 4.33-ը: 1-ը ցույց է տալիս, որ տվյալ երկրում փոփոխություններ գրեթե չեն եղել, իսկ 4.33-ը ներկայացնում է զարգացած շուկայական տնտեսության չափանիշը: 2015 թ. դիտարկվել են շուկայական տնտեսության 4 ոլորտներ՝ կորպորատիվ հատված, էներգետիկայի հատված, ենթակառուցվածքներ և ֆինանսական հաստատություններ:

Համաձայն այս զեկույցի՝ ՀՀ տնտեսությունում դեռևս անելիքներ կան բանկային, ապահովագրության և այլ ֆինանսական ծառայությունների շու-

² Աղբյուրը՝ Armenia Country Profile – 2013, ENTERPRISE SURVEYS, էջ 4.

<http://www.enterprisesurveys.org/~media/GIAWB/EnterpriseSurveys/Documents/Profiles/English/armenia-2013.pdf>

³ St'u Transition Report 2011: Crisis and Transition. People's Perspective – European Bank for Reconstruction and Development, 178 էջ.

<http://www.ebrd.com/downloads/research/transition/tr11.pdf>

Доклад о переходном процессе за 2012 год: трансграничная интеграция – Европейский банк реконструкции и развития, 146 էջ.

<http://www.ebrd.com/russian/downloads/research/transition/tr12ru.pdf>,

Transition Report 2013. Stuck in Transition? – European Bank for Reconstruction and Development, 122 էջ. <http://www.ebrd.com/downloads/research/transition/tr13.pdf>

Transition Report 2014: Innovation in Transition – European Bank for Reconstruction and Development, 124 էջ. <http://2014.tr-ebrd.com/>

⁴ St'u Transition Report 2015-2016: Rebalancing Finance – European Bank for Reconstruction and Development, 100 էջ. <http://www.ebrd.com/news/publications/transition-report/ebrd-transition-report-201516.html>

կայի զարգացման, միկրո ՓՄՁ-ների ֆինանսավորման, մասնավոր բաժնեմասի և կապիտալի շուկայի զարգացման ոլորտներում: Ենթակառուցվածքներում բացեր են մատնանշվել քաղաքային տրանսպորտի կառուցվածքի և երկաթուղու գործունեությունն ապահովող շուկայական հաստատությունների կայացման բնագավառում: Էներգետիկայի հատվածում զգալի անելիքներ կան բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, իսկ կորպորատիվ հատվածում՝ ագրոբիզնեսի և անշարժ գույքի շուկայի կառուցվածքի բարելավման առումներով: Որպես Հայաստանի տնտեսության զարգացման 2016 թ. առաջնահերթություններ՝ ՎՋԵԲ փորձագետները նշել են գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քայլերը (մրցունակության և բազմատեսակացման խթանման պայմանների, կարգավորիչ կանոնակարգերի մշակում, միջսահմանային տարածաշրջանային կապերի ամրապնդում), արտաքին ցնցումների նկատմամբ տնտեսական ճկունությունն ուժեղացնելու համար խելամիտ մակրոտնտեսական քաղաքականության վարումը, ֆինանսական միջոցների մատչելիության ապահովումը, այդ թվում՝ տեղական կապիտալի շուկայի զարգացումը և բանկային համակարգի ապադլորայնացումը⁵:

2013 թ. Համաշխարհային բանկի Միջազգային զարգացման ընկերակցությունը (International Development Association) հրապարակել է ցածր եկամուտ ունեցող աշխարհի 80 երկրների, այդ թվում՝ Հայաստանի «Երկրի կատարողականի գնահատման» 2013 թ. վարկանիշները⁶: Համաձայն այս զեկույցի՝ քաղաքականությունների և ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման համակարգով երկրները վարկանշվել են ըստ 16 չափանիշների, որոնք ներառվել են չորս համապատասխան քլաստերներում.

Ա. տնտեսական կառավարում՝ 3 չափանիշ,

Բ. կառուցվածքային քաղաքականություններ՝ 3 չափանիշ,

Գ. հասարակական հավասարության և սոցիալական ներգրավվածության քաղաքականություններ՝ 5 չափանիշ,

Դ. պետական հատվածի կառավարում և կառույցներ՝ 5 չափանիշ:

Քլաստերների վարկանիշի որոշման համար կիրառվել է 1–6 միջակայքը. «1»՝ գնահատականը ցույց է տալիս կատարողականի շատ ցածր մակարդակ, «2»-ը՝ ցածր, «3»-ը՝ միջինից ցածր, «4»-ը՝ միջինից բարձր, «5»-ը՝ բարձր, «6»-ը՝ շատ բարձր:

Կարևոր վարկանիշներից է նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) կողմից երկրների՝ ըստ ռիսկայնության դասակարգումը, որի արդյունքները հրապարակվում և օգտագործվում են վերջիններիս՝ արտահանման ու վարկավորման համաձայնագրերով իրականացվող գործարքների նվազագույն ռիսկի հավելավճար որոշելիս: Ըստ այդմ՝ երկրները դասակարգվում են 8 ռիսկային կարգերի, որտեղ ամենաբարձր քաղաքական և վարկի չվճարման ռիսկ ունեցող երկրները համարվում են 7-րդ կարգի, իսկ ամենացածր ռիսկի մակարդակ ունեցողները՝ 1-ին

⁵ Աղբյուրը՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի «Կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների 2015 թվականի ինդեքս», էջ 6, ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջից. <https://www.cba.am/am/SitePages/panalyticalmaterialsresearches.aspx>

⁶ Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի Միջազգային զարգացման ընկերակցության «Երկրի քաղաքականությունների և ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման 2013 թվականի վարկանիշը», էջ 3, ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջից.

<https://www.cba.am/am/SitePages/panalyticalmaterialsresearches.aspx>

կարգի: ՏՀԶԿ և Եվրոմիության անդամ երկրները համարվում են «0» ռիսկային կարգի: Հայաստանն, ըստ ՏՀԶԿ մեթոդաբանության, 1999–2005 թթ. ներառվել է ռիսկայնության ամենաբարձր՝ քաղաքական և վարկի չվերադարձման ռիսկ ունեցող երկրների 7-րդ կարգում: Սկսած 2006 թ.՝ գնահատականը բարելավվել է 1 կարգով: Ըստ արտահանման վարկի չվերադարձման ռիսկի ցուցանիշի՝ Հայաստանը նախկին ԽՍՀՄ և ԵԿԱ 29 երկրների շարքում զբաղեցնում է 17-րդ տեղը: Նախկին ԽՍՀՄ երկրներից Հայաստանից ավելի նպաստավոր վիճակում են Մերձբալթյան երկրները, Ռուսաստանը, Ղազախստանը և Ադրբեջանը, իսկ ԵԿԱ երկրներից Հայաստանին իրենց դիրքով զիջում են Մոնտենեգրոն, Բոսնիա և Հերցեգովինան և Կոսովոն⁷:

Գործարար և ներդրումային միջավայրերի գնահատման մեկ այլ կարևոր վարկանիշ է Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» ("Doing Business") պարբերական ուսումնասիրությունը, որը ներկայացնում է գործարարության իրական կարգավորման և կիրարկման միջոցառումները, այլ խոսքով՝ դասակարգումը, որն արտահայտում է տվյալ տնտեսությունում գործարարությամբ զբաղվելու դյուրինության աստիճանը, գնահատում է այն կարգավորումները, որոնք ուղղակիորեն ազդում են գործարար միջավայրի զարգացման աստիճանի ու տնտեսական աճի վրա՝ հնարավորություն տալով իրականացնելու միջերկրային համեմատություններ հետազոտված 189 երկրների միջև: Համաթիվը հաշվարկվում է որպես հետևյալ բաղկացուցիչ ոլորտները բնութագրող համաթվերի գումար՝ ընկերության հիմնադրում, շինարարական թույլտվություններ, էլեկտրաէներգիայի հասանելիություն, սեփականության գրանցում, վարկերի ստացում, ներդրողների շահերի պաշտպանություն, հարկերի վճարում, արտաքին առևտուր, պայմանագրերի կիրարկում և ընկերության լուծարում:

Ներդրումային և գործարար միջավայրի մեկ այլ միջազգային վարկանիշ է «Տնտեսական ազատության ցուցանիշը», որը, սկսած 1995 թ., «Ուլ Սթրիթ» օրաթերթը և «Հերիթեյջ» հիմնադրամը գնահատում են ըստ այն տասը գործոնների, որոնք առավել ուղղակի ազդեցություն են ունենում ներդրումային և գործարար միջավայրերի վրա: Տնտեսական ազատությունը ենթադրում է մասնավոր սեփականության անձեռնմխելիության հիմք՝ արտադրելու, առևտրով զբաղվելու, խնայելու, ներդնելու, ստեղծածից ու աշխատածից օգտվելու, ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների հետ տնտեսական հարաբերություններ հաստատելու, գներ ձևավորելու, պայմանագրի կողմերի համաձայնությամբ ցանկացած դրամական միավորներից օգտվելու ազատությունը⁸: Մրցակցության խրախուսմանն ու ձեռնարկատիրության և երկրի քաղաքացիների համար ընդունելի, արդյունավետ շուկայական ինստիտուտների ստեղծմանն ուղղված պետության գործունեությունը նշանակում է տնտեսական ազատության ընդլայնում: Այդ, այսպես կոչված, «որակական» քննարկումներն ունեն նաև քանակական հաստատում: Գործոնների հետազոտման հիմքում, որոնք առավել մեծ ազդեցություն են ունենում բարենպաստ տնտեսական ազատության համար ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման վրա, առանձնանում են այդ համաթվերի բաղկացուցիչ մասերը,

⁷ Աղբյուրը՝ ՏՀԶԿ «Երկրի ռիսկի դասակարգման 2015 թվականի գնահատական», էջ 3, ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջից. <https://www.cba.am/am/SitePages/panalyticalmaterialsresearches.aspx>

⁸ Ա. Մարկոսյան, Դ. Հախվերդյան, Ա. Հովասափյան, Ինստիտուտներ և տնտեսական աճ. հետազոտված բարեփոխումներ, բաց թողնված հնարավորությունների կորուստներ, Եր., «Էդիթ Պրինտ», 2010, էջ 8:

որոնք հետագայում գնահատվում ու ամբողջականացվում են: Ընդհանուր տնտեսական ազատությունը պարզելու համար վերլուծության են ենթարկվում հետևյալ գործոնները.

- սեփականության իրավունքների պաշտպանություն (իրավական համակարգի ազատում պետական ազդեցությունից, պետական սեփականության ազգայնացում, արտասահմանյան միջնորդ դատարանների ներգրավում, օրենսդրորեն թույլատրելի, պաշտպանված մասնավոր սեփականություն և այլն),
- կոռուպցիայից ազատություն (դատական մարմինների, մաքսային և կառավարական բյուրոկրատիայի համակարգերում),
- գործարար ազատություն,
- ներդրումների ազատություն (օտարերկրյա ներդրումների վերաբերյալ օրենսդրություն, գործարարության մեջ օտարերկրյա սեփականության սահմանափակում, հողի նկատմամբ օտարերկրացիների սեփականության իրավունք, տեղական ֆինանսավորման մատչելիություն օտարերկրյա կազմակերպությունների համար և այլն),
- հարկաբյուջետային ազատություն (եկամտահարկի առավելագույն դրույքաչափ, միջին հարկատուի կողմից վճարվող հարկային դրույքաչափ, շահութահարկի առավելագույն դրույքաչափ, պետական ծախսեր),
- դրամավարկային ազատություն (վերջին տասը տարիների հաշվով գնաճի միջին կշռված տեմպ),
- ֆինանսական ազատություն (բանկերում պետական սեփականություն, սահմանափակումներ արտասահմանյան բանկերի կողմից մասնաձյուղեր կամ բաժանմունքներ հիմնելու հարցում, պետության ազդեցություն վարկերի տեղաբաշխման գործում, պետական կարգավորում և այլն),
- աշխատանքի ազատություն (նվազագույն աշխատավարձի մասին օրենք),
- առևտրի ազատություն (ներմուծման արգելքներ կամ քվոտավորում, հավաստագրման կամ լիցենզավորման խիստ պահանջներ),
- կառավարության ծախսումներ (պետական սպառում, գործարարության մեջ, արդյունաբերությունում պետական մասնաբաժին, պետական ձեռնարկություններից կամ պետական սեփականությունից ստացված մասնաբաժին, պետական հատվածի արտադրանքի մասնաբաժին):

Համաթվի գնահատման համար կիրառվում է 0 – 100 միավորային սանդղակ, ընդ որում բարձր գնահատականը տնտեսության ազատության առավել մեծ աստիճանի մասին է վկայում: Բացի դրանից, երկրները դասակարգվում են 5 խմբի: Համաձայն դասակարգման՝ 80 և ավելի համաթիվ ունեցող երկրները համարվում են *ազատ*, 70 – 79.9 համաթիվ ունեցողները՝ *հիմնականում ազատ*, 60.0 – 69.9 համաթիվ ունեցողները՝ *չափավոր ազատ*, 50.0 – 59.9 համաթիվ երկրները՝ *հիմնականում ոչ ազատ* և 50-ից ցածրները՝ *ճնշված* երկրներ:

Հիմք ընդունելով դիտարկած բոլոր միջազգային հեղինակավոր կազմակերպությունների՝ ներդրումային և գործարար միջավայրերի, ինչպես նաև կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման գործընթացները բնութագրող հիմնական համաթվերը և ենթահամաթվերը (ըստ դրանց ձևավորման չափանիշների, գնահատման սանդղակների և ՀՀ միջինացված ցուցանիշների)՝ մենք մշակել ենք ամփոփ վարկանշային աղյուսակ, որում ներկայացվել են բարեփոխումների մասով ՀՀ արձանագրած հաջողությունները և համեմատաբար թույլ ոլորտները:

Աղյուսակ 1

Հայաստանում ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումների ընթացքի վերաբերյալ միջազգային ամփոփ գնահատականները

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ		
Ցուցիչ	Միջոց	Բարձր
Կառավարում և ձեռնարկությունների վերակառուցում (սանդղակը՝ 1-4.33, ՀՀ՝ 2.33)	Խոշոր չափի ձեռնարկությունների սեփականաշնորհում (սանդղակը՝ 1-4.33, ՀՀ՝ 3.59)	Փոքր չափի ձեռնարկությունների սեփականաշնորհում (սանդղակը՝ 1-4.33, ՀՀ՝ 3.94)
Մրցակցային քաղաքականություն (սանդղակը՝ 1-4.33, ՀՀ՝ 2.25)	Տնտեսական գործունեության կանոնակարգում (սանդղակը՝ 1-6, ՀՀ՝ 4.1)	Գների ազատականացում (սանդղակը՝ 1-4.33, ՀՀ՝ 4.23)
Կորպորատիվ հատվածի բարեփոխումներ (սանդղակը՝ 1-4.33, ՀՀ՝ 2.84)	Սոցիալական պաշտպանություն և աշխատանք (սանդղակը՝ 1-6, ՀՀ՝ 4.3), Աշխատանքի ազատություն (սանդղակը՝ 0-100, ՀՀ՝ 72.7)	Առտուր և արժույթային համակարգ (սանդղակը՝ 1-4.33, ՀՀ՝ 4.30)
Ֆինանսական հատվածի բարեփոխումներ (սանդղակը՝ 1-4.33, ՀՀ՝ 1.93)	Դրամավարկային և արժույթային քաղաքականություն (սանդղակը՝ 1-6, ՀՀ՝ 4.6), Դրամավարկային ազատություն (սանդղակը՝ 0-100, ՀՀ՝ 74.3)	Հարկաբյուջետային քաղաքականություն (սանդղակը՝ 1-6, ՀՀ՝ 5.0), Հարկաբյուջետային ազատություն (սանդղակը՝ 0-100, ՀՀ՝ 88.1)
Ենթակառուցվածքներում բարեփոխումներ (սանդղակը՝ 1-4.33, ՀՀ՝ 2.50), Էլեկտրաէներգիայի հասանելիություն (ընդամենը՝ 189, ՀՀ՝ 99), Էներգետիկայի հատվածի բարեփոխումներ (սանդղակը՝ 1-4.33, ՀՀ՝ 2.84)	Բյուջետային և ֆինանսական քաղաքականություն (սանդղակը՝ 1-6, ՀՀ՝ 4.5), Ֆինանսական ազատություն (սանդղակը՝ 0-100, ՀՀ՝ 70.0), Վարկերի ստացում (ընդամենը՝ 189, ՀՀ՝ 42)	Գործարարության ազատություն (սանդղակը՝ 0-100, ՀՀ՝ 84.4)
Ընկերության լուծարում (ընդամենը՝ 189, ՀՀ՝ 71)	Շինարարական թույլտվությունների ստացում (ընդամենը՝ 189, ՀՀ՝ 62)	Ընկերության հիմնադրում (ընդամենը՝ 189, ՀՀ՝ 5)
Շրջական միջավայրի պահպանություն, քաղաքականություն և կառույցներ (սանդղակը՝ 1-6, ՀՀ՝ 3.0)	Հանրային ռեսուրսների հավասարաչափ օգտագործում (սանդղակը՝ 1-6, ՀՀ՝ 4.5)	Կառավարության ծախսումներ (սանդղակը՝ 0-100, ՀՀ՝ 83.9)
Սեփականության իրավունքների և օրենքների վրա հիմնված պետական կառավարում (սանդղակը՝ 1-6, ՀՀ՝ 3.5), Սեփականության իրավունքների պաշտպանություն (սանդղակը՝ 0-100, ՀՀ՝ 29.3)	Պարտքի քաղաքականություն և կառավարում (սանդղակը՝ 1-6, ՀՀ՝ 4.5)	Սեփականության գրանցում (ընդամենը՝ 189, ՀՀ՝ 14)
Պետական հատվածի թափանցիկություն, պատասխանատու գործելակերպ և կոռուպցիա (սանդղակը՝ 1-6, ՀՀ՝ 3.2), Կոռուպցիայից ազատություն (սանդղակը՝ 0-100, ՀՀ՝ 28.7)	Ներդրումների ազատություն (սանդղակը՝ 0-100, ՀՀ՝ 73.6), Ներդրողների շահերի պաշտպանություն (ընդամենը՝ 189, ՀՀ՝ 49)	Պայմանագրերի կիրարկում (ընդամենը՝ 189, ՀՀ՝ 28)
Քաղաքական և վարկի չվճարման ռիսկ (սանդղակը՝ 1-7, ՀՀ՝ 6)	Հարկերի վճարում (ընդամենը՝ 189, ՀՀ՝ 41)	
	Գներդրային հավասարություն (սանդղակը՝ 1-6, ՀՀ՝ 4.4), Մարդկային ռեսուրսների զարգացում (սանդղակը՝ 1-6, ՀՀ՝ 4.0)	

Ինչպես պարզ է դառնում աղյուսակից, ներդրումային և գործարար գրավիչ միջավայր ստեղծելու տեսանկյունից ՀՀ-ում ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունքները դեռևս տեսանելի չեն մրցակցային քաղաքականության, կորպորատիվ և ֆինանսական հատվածների բարեփոխումների, սեփականության իրավունքների պաշտպանության, պետական հատվածի թափանցիկության, կոռուպցիայի կանխարգելման և այլ ոլորտներում: Մինչդեռ ինստիտուցիոնալ բարեփոխումներն իրենց դրական արդյունքներն են տվել գների ազատականացման, առևտրի և արժույթային համակարգի, հարկաբյուջետային քաղաքականության, պայմանագրերի կիրարկման և այլ բնագավառներում: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ ցանկալի ցուցանիշները ձեռք կբերվեն և տեսանելի դրական արդյունքներ կգրանցվեն միայն թիրախավորված միջոցառումների և համալիր ջանքերի համախմբման արդյունքում:

Այսպիսով՝ հիմնավորելով ինստիտուցիոնալ համակարգի և ներդրումային միջավայրի փոխկապվածությունը՝ ներդրումային միջավայրի գնահատման միջազգային վարկանիշների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ինստիտուցիոնալ բարեփոխումները ՀՀ-ում պետք է լինեն շարունակական ու համակարգային՝ անքակտելիորեն կապված ներդրումային միջավայրի գրավչության մեծացմանն ուղղված հետագա միջոցառումների հետ:

ГОАР КУРГИНЯН*Аспирант кафедры "Макроэкономики" АГЭУ*

Совокупные международные рейтинги оценки инвестиционной среды Республики Армения.— После обоснования взаимосвязи инвестиционной среды и институциональной системы Республики Армения, в данной статье представляются оценки международных организаций о процессе проведения институциональных и структурных реформ, в частности - основные исследования "Всемирного банка", "Европейского банка реконструкции и развития", "Организации экономического сотрудничества и развития" и "Фонда Наследия" об оценке институционального развития страны. В результате исследований автором разработана совокупная таблица оценки международных рейтингов инвестиционной среды, в рамках которой представлены успешно проведенные реформы в Республике Армения, и выявлены относительно слабые области.

Ключевые слова: *инвестиционная среда, международный рейтинг, оценка инвестиционной среды, институциональное препятствие, институциональная реформа, экономическая свобода.*

JEL: E22, F53, O38, O49

GOHAR KURGHINYAN*Post-Graduate at the Chair of
"Macroeconomics" at ASUE*

The Summary of International Ratings of Investment Environment Evaluation in the Republic of Armenia.— Justifying the interconnectedness of the investment environment and the institutional system of the Republic of Armenia, the article reveals the estimation of international organizations on the process of institutional and structural reforms in the country. Particularly, the main studies on the evaluation of institutional development carried out by the World Bank, the European Bank for Reconstruction and Development, the Organization for Economic Cooperation and Development and the Heritage Foundation have been presented within the scope of the article. In the result of the research a summary table on international ratings of investment environment evaluation has been developed by the author presenting successful reforms in the Republic of Armenia and revealing relatively weak fields.

Key words: *investment environment, international rating, investment environment evaluation, institutional obstacle, institutional reform, economic freedom.*

JEL: E22, F53, O38, O49